

BOOK REVIEWS

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ
mr.bayburdyan@mail.ru

ՈՒՇԱԳՐԱՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Յաիր Աուրոն, Անընդունելի անտարբերություն: Միոնիզմը և հայոց ցեղասպանությունը, «Չանգակ» հրատ., Երևան, 2013, 582 էջ ('The Banality of Indifference: Zionism and the Armenian Genocide' published by New Brunswick, London, in 2000).

Իսրայելցի պատմաբան Յաիր Աուրոնը, որը հանդիսանում է եվրոպական հրեության կործանման և արդի հրեության պատմության ճանաչված մասնագետ, սույն գրքով հանդես է գալիս նաև որպես հայոց ցեղասպանության խնդրի խորագետ ուսումնասիրող: Նա մեղվի փութաջանությամբ հավաքել ու ներկայացրել է աշխարհի տարբեր ծագերում լույս տեսնող հրեական մամուլի հրապարակած թեր և դեմ նյութերը հայերի, Հայկական հարցի և առհասարակ Օսմանյան կայսրությունում հայերի ճակատագրի մասին:

Իր առջև դրված խնդիրը նա իրականացնում է յուրահատուկ ձևով: Ըստ էության նրա հետազոտության բուն նյութը հայերի ցեղասպանության նկատմամբ Պաղեստինի հրեական համայնքի վերաբերմունքի լուսաբանումն է՝ հրեական ու հայկական իրավիճակների զուգահեռ հետազոտման հենքի վրա: Ընդ որում, հեղինակը չի սահմանափակվում լոկ փաստերի արձանագրումով, այլ աշխատում է բացահայտել ցեղասպանության, որպես երևույթի խորքային գործոնները, նրա դրդապատճառները և այլն, որոնք բանալի են հանդիսանում ճշմարտացիության լույսի ներքո ընկալելու նաև հայոց ցեղասպանության ողջ էությունը: Ըստ էության սույն աշխատությունը ոչ միայն ցեղաս-

պանության երևույթի գիտական քննական վերլուծություն է, այլև լայնածավալ փիլիսոփայական մտորումների արգասիք:

Աուրունի գիրքը նաև ուսումնասիրություն է Օսմանյան կայսրությունում հայ-հրեական հարաբերությունների, դրանց լուսավոր և ստվերոտ կողմերի մասին, մի հարցի, որը դժբախտաբար բավարար ուշադրության չի արժանացել հայ պատմաբանների կողմից:

Արժեկորելով իր կատարած գործը, հեղինակը գրում է. «Սա գիրք է Իսրայել պետության բնույթի և էության մասին, և, գրելով այն, ես՝ որպես անհատ, իմ պարտքն եմ կատարել իմ ժողովրդի, իմ հասարակության և հայ ժողովրդի առջև: Ես համոզված եմ, որ ժխտելով այլ ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը՝ մենք պղծում ենք մեր սեփական Հոլոքոստի ժառանգությունը»: Աուրունը հույս է հայտնում, որ իր այս գիրքը կնպաստի հայ և հրեա ժողովուրդների միջև փոխըմբռնման մեծացմանը, որոնք իր կարծիքով «ավելի էական նմանություններ ունեն, քան տարբերություններ»:

Գրքում ցեղասպանության հանցագործությունը որակվում է որպես չարիքի ծայրահեղ և տոտալ ձև, որ մարդկային մի տեսակի էակներ կարող են պատճառել ոչ մի մեղք չունեցող մարդկային այլ էակների: Յաիր Աուրունը այն հաստատ համոզմանն է, որ հայ ժողովրդի ապրած ցեղասպանությունը անջնջելի է նրա պատմական և հավաքական հիշողությունից: Որ այն դրոշմվել է հայ ժողովրդի ինքնագիտակցության խորը շերտերի վրա:

Գրքի նախաբանում հեղինակը առիթնող անկեղծությամբ գրում է, որ «ես մշտապես ճնշող անհարմարության ու զայրույթի զգացում եմ ապրել ժխտողականությամբ սահմանակից այն խուսափողականության պատճառով, որ հայկական ցեղասպանության հիշատակի նկատմամբ հանդես են բերում միմյանց փոխարինող խրայելական կառավարությունները»: Դա Աուրունը համարում է բարոյապես անընդունելի, մասնավորապես նրա համար, որ հրեաներն իրենք են դարձել Հոլոքոստի զոհեր: Նա խոստովանում է, որ հայոց ցեղասպանությունն ուսումնասիրելու ընթացքում իր առջև բացված իրականությունն իր համար լիովին անսպասելի էր, քանի որ ինքը հույս ուներ գտնելու՝ շատ ավելի մեծ կարեկցանք հայերի տառապանքների նկատմամբ, օգնության հասնելու ավելի շատ փորձեր: Նա դառնությամբ նշում է, որ հայ ժողովրդի ոչնչացումը այդպես էլ չմտավ Արևմուտքի հավաքական հիշողության մեջ, այլ ընդհակառակը, դասվեց «մոռացված ցեղասպանության» շարքը: Դա Յաիր Աուրունը համարում է «հանցավոր լռության դրսևորում», «չպատժված հանցագործություն»: Նա գտնում է, որ այն հանգամանքը, որ հայերի զանգվածային սպանությունների համար թուրքերն այդպես էլ չկանգնեցին միջազգային դատարանի առաջ, ստիպեցին Հիտլերին հավատալ, որ մարդկության դեմ իր հանցագործությունները նույնպես անպատիժ կմնան:

Չուգահեռներ անց կացնելով հայերի և հրեաների պատմական ճակատագրերի միջև, Աուրոնը նշում է, որ այն բանից հետո, երբ Հայաստանը կորցրեց իր անկախությունը, հայերը մնացին ապրելու իրենց պատմական հայրենիքում և երկար դարեր քրիստոնեական անկյավ էին հանդիսանում մահմեդական Թուրքիայում: Իսկ հրեաներն արտաքսվեցին իրենց հողից և կարողացան վերադառնալ միայն շատ սերունդներ անց: Օսմանյան կայսրության ողջ պատմության ընթացքում հայերի և հրեաների կարգավիճակը մշտական ճնշման տակ գտնվող կրոնական փոքրամասնության վիճակ էր, ուստի և նրանք հանդիսանում էին Աուրոնի արտահայտությամբ «խղեալական գոհեր՝ հարմար և անպաշտպան»: Նա նշում է, որ առաջին աշխարհամարտի տարիներին երկու ժողովուրդներն էլ էականորեն տուժել են թուրքական վարչակարգի լծից և դաժանություններից, բայց ոչ հավասարաչափ կերպով: Եթե Պաղեստինի հրեաների վրա թուրքական վարչակարգի ճնշումը հանգեցրեց համեմատաբար աննշանակալից գույքային և մարդկային կորուստների, ապա հայերը ենթարկվեցին համակարգված բնաջնջման: Միանգամայն ակնհայտ էր, որ պատերազմում պարտություն կրող Թուրքիան պետք է որոներ քավության նոխազ և այդ դերում ամենահարմարը անպաշտպան հայ ժողովուրդն էր:

Ի՞նչն օգնեց հրեական համայնքին խուսափելու հայերի ճակատագրից,– հարցադրում է կատարում Աուրոնը և ինքն էլ փորձում պատասխանել այդ հարցին. «գուցե նրանց ունեցած ազդեցությունը (իրական կամ երևակայական) համաշխարհային մամուլի վրա, թե՞ պատճառը հրեաների անառարկելի հնազանդությունն էր, որով այնքան տարբերվում էին ըմբոստ հայերից: Կամ էլ գուցե Թուրքիան շահագրգռված չէր ոչնչացնել հրեաներին, քանի որ հրեական հարցը նրան շատ ավելի քիչ էր անհանգստացնում, քան ազգային այլ խնդիրներ»:

Բոլոր դեպքերում, նշում է Աուրոնը, պատերազմի ողջ տևողության ընթացքում հրեաները մշտապես գտնվել են տագնապի մեջ, վախենալով կիսել հայերի ճակատագիրը կամ դառնալու «երկրորդ հայեր»: Երբ 1915 թ. թուրքական իշխանությունները զազանաբար ճնշեցին Վանի հայության ինքնապաշտպանությունը, հրեական մամուլը գրեց. «Ե՛վ հաշվեհարդարից ուրախացողների և դրանից սարսափողների միջև մշտապես կախված է հարցը. ե՞րբ է գալու մեր հերթը»:

Աուրոնը գրում է, որ երբ հայերը դարձան հրեշավոր հանցագործության գոհեր, աշխարհը նրանց թողել էր բախտի քմահաճույքին: Մեծ տերությունները գործնականում ոչինչ չարեցին կանխելու համար հայերի զանգվածային սպանությունները: Նրանց այդ անտարբերությունը հայ ժողովրդի ողբերգության նկատմամբ Աուրոնն անվանում է «ցինիզմ և երկերեսանիություն»,

մանավանդ որ նրանք ողջ պատերազմի ընթացքում հայերին կերակրում էին օսմանյան անագորույն լծից ազատագրելու սին հույսերով: Թերևս Թուրքիայի դաշնակից Գերմանիան միակ պետությունն էր, որը կարող էր կանխել կամ դադարեցնել հայերի բարբարոսական ոչնչացումը, սակայն այդպես էլ նա չմիջամտեց: Բարոյականության տեսակետից, գտնում է գրքի հեղինակը, դա հանդիսանում է հանցագործությանը մասնակցություն, թեկուզ և միջնորդավորված: Նա գտնում է, որ գերմանացիների վրա է ընկած առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայերի զանգվածային սպանությունների մեղքի ու պատասխանատվության մի մասը: Աուրոնի կարծիքով այն փաստը, որ բոլշևիկյան Ռուսաստանը փաստորեն հրաժարվեց Օսմանյան կայսրության ասիական տարածքի հանդեպ իր հավակնություններից վերջինիս պարտությունից հետո, սպառնում էր իսկական աղետ դառնալ հայերի համար: Այդ բոլորը հիմք է տվել սիոնիզմի կարկառուն ներկայացուցիչներից մեկին՝ Բեն Գուրիոնին հայերին անվանելու «խաբված ժողովուրդ»:

Աուրոնի գրքում լայն տեղ է հատկացված լուսաբանելու համար այն հարցը, թե ինչպե՞ս արձագանքեց Պաղեստինի հրեական համայնքը հայերի ոչնչացմանը: Այդ հարցադրմանը հետևում է հետևյալ պատասխանը. Պաղեստինի հրեական համայնքի արձագանքը հայոց ցեղասպանության նկատմամբ խուլ էր և մեծապես պայմանավորված սեփական շահերով: Որպես այդ թեզի պարզաբանում, բերված են հետևյալ փաստարկները. Օսմանյան կայսրությունում սփռված մոտ կես միլիոն հրեաներն, ի տարբերություն հայերի, չունեին ցայտուն արտահայտված հրեական ազգային ինքնագիտակցություն: Հրեաներն իրենց համարում էին Օսմանյան կայսրության հպատակներ և նրա նկատմամբ լոյալություն էին պահպանում: «Հրեաները, – գրում է սիոնիստական շարժման կարկառուն դեմքերից մեկը՝ Կապլանսկին, – վարժվել էին երախտագիտության և շնորհակալության զգացմունքով կիսել Թուրքիայի ճակատագիրը: Թուրքիան հյուրընկալորեն բացել էր դռները Իսլամիայից վտարված հրեաների առջև՝ ապահովելով նրանց համար, որքանով թույլ էին տալիս Ղուրանը և նախորդ միապետական վարչակարգը, հավասարակշռություն օրենքի առջև և հատուկ ազգային իրավունքներ»: Նշված տեսակետը համահունչ էր Պաղեստինի հրեաների ընկերվարական կազմակերպության՝ «Պուլեյ Յիոնի» այդ ժամանակվա քարոզած սկզբունքին, որը ենթադրում էր, որ իթթիհադականները մտադիր են Թուրքիայում ստեղծել «ազգային ֆեդերատիվ պետություններ» կամ «ազգային տարածքային ինքնավարություններ», մի բան, որ Աուրոնը համարում է կատարելապես ոչ իրատեսական և միամիտ մարդկանց երազանք: Նա նաև պարզաբանում է, որ Պաղեստինի հրեական համայնքի մեծ մասը և սիոնիստական շարժման մասնակիցների մեծամասնությունը թուրքամետ ու գերմանամետ էին, և հավատում

Էին, թե սիոնիստական շարժման ճակատագիրը և պաղեստինյան հրեաների համայնքի ապագան կապված է Օսմանյան կայսրության և Գերմանիայի ճակատագրի հետ: Ուստի սիոնիստական գործիչների աշխատություններում, նրանց ելույթներում, մամուլի հրապարակումներում և այլն, որպես խնդիր և նպատակ միշտ եղել է սիոնիզմի գործը, որի վրա էլ ամեն ինչ կենտրոնացած է, – ասում է Աուրոնը: Նա խոստովանում է, որ հայերի հարցում սիոնիստական շարժման կարկառուն ներկայացուցիչները որպես կանոն առաջնորդվում էին «օգտապաշտական» քաղաքականության դիրքերից՝ սիոնիզմի հետպատերազմյան նպատակների համատեքստում: «Այն ժամանակներում և այն հանգամանքներում «օգտապաշտական և եսասիրական շահերը ամենուր և ամեն կերպ բարձր էին դասվում մնացած ամենից, իսկ իշուվի (իմա՝ Պաղեստինի հրեական համայնքի – Վ. Բ.) և սիոնիզմի շատ առաջնորդների համար, դրանք խորթ չէին», – գրում է Աուրոնը:

Նա գրում է, որ հրեական մամուլում հրապարակված հոդվածների մի մասը պարունակում է չարախնդություն հայերի ողբերգության առթիվ: Այդ չարախնդության կարևոր պատճառներից մեկը, ըստ Աուրոնի, հրեական առևտրաֆինանսական կոսմոպոլիտական հակումներով տարված բուրժուազիայի հրճվանքն էր, որ հայկական ջարդերից հետո հայերի հետ մրցակցային պայքարում այսուհետև հրեաները կարող են Թուրքիայի տնտեսական և քաղաքական կյանքում զբաղեցնել այն տեղը, որ նախկինում պատկանում էր հայերին: Հենց այդ պատճառով, գրում է Աուրոնը, քաղաքական սիոնիզմի պարագլուխներից մեկը՝ Թեոդոր Հերցլը, որդեգրել էր հետևյալ սկզբունքը. «ինչը որ հարմար է գալիս հայերին, բոլորովին հարմար չէ հրեաներին»:

Նշված մեկնաբանություններից հետո Աուրոնը արձանագրում է. «Մենք պարզ մարդկային արձագանքի, վրդովմունքի, կարեկցանքի հետք անգամ չենք գտել զոհերի նկատմամբ, թեև կատարել ենք բավականին ծավալուն հետազոտություններ»: Նման դիրքորոշումը և անտարբերությունը նրա կարծիքով արժանի է ամենայն դատապարտման: Սակայն որպես այդ անտարբերության «ներացուցիչ» «հանգամանք» նա համարում է այն, որ Պաղեստինի հրեական համայնքը իր բոլոր ուժերը ներդրել էր գոյատևմանը, որպեսզի հայերին պատուհասած աղետը չկրկնվի իրենց հետ: Նա գրում է, որ Պաղեստինի հրեական համայնքը հայկական ողբերգությունն ընդունել էր որպես ապագայի դաս. այսինքն այն ինչ որ կատարվել էր հայերի հետ, կարող է տեղի ունենալ նաև հրեաների հետ: «Չարմացնում է այն, որ մենք չենք գտնում վրդովմունքի ոչ մի վկայություն օրագրերում, նամակներում, մասնավոր փաստաթղթերում: Պաշտոնական իշուվն իրեն պահում էր այնպես, ասես հայկական իրադարձություններն իրենց հետ ոչ մի կապ չունեին: Միակ բանը, որ

անհանգստացնում էր նրանց, այն էր, որ ոչ մի նման բան չպատահի մեզ հետ»:

Կտրուկ դատապարտելով այդ հոռի վարքագիծը, Աուրոնը վկայակոչում է Սողոմոն իմաստունի հայտնի պատվիրանը. «մի ցնձա, երբ կրկնի թշնամիդ»: Եվ հակառակ սիոնիստական մամուլի և քաղաքական շրջանների որդեգրած հակահայկական այդ դիրքորոշմանը, Աուրոնը իր գրքում մշտապես շեշտում է, որ հայերը երբեք չեն եղել հրեաների թշնամիները: Ավելին, նա ցույց է տալիս, որ ի տարբերություն սիոնիստական շարժման վերոհիշյալ գործիչների, հրեական իրականության մեջ եղել են նաև ոչ պաշտոնական տեսակետներ ունեցող հրեա մտավորականության առանձին ներկայացուցիչներ՝ գրողներ, հրապարակախոսներ և այլն, որոնք հանդես են եկել թուրքական իշխանությունների գազանությունները դատապարտող հայտարարություններով, հոգվածներով և այլն, իրենց կարեկցանքն արտահայտելով հայ ժողովրդի նկատմամբ: Քիչ չեն եղել նաև հրեա այնպիսի գործիչներ, որոնք ունեցել են շեշտված հակաթուրքական դիրքորոշում, առաջնորդվելով այն գաղափարով, որ հենց թուրքերն են վաղնջական հողերում հրեական ժողովրդի վերածնանը հակազդելու պատճառը: Աուրոնը բերում է տվյալներ, որ նման կողմնորոշում ունեցող հրեական մամուլում հույս էր հայտնվում, որ պատերազմում գերմանացիների և թուրքերի պարտության դեպքում «ազատություն կստանան երեք ժողովուրդներ՝ հրեաները, հայերը և լեհերը»: Հայկական հարցին և հայ ժողովրդի ողբերգությանը վերաբերող այդ առաջավոր մարդկանց տեսակետները, ըստ Յաիր Աուրոնի, հեռու է եղել քաղաքական օգտապաշտությունից: Անկասկած, հրեա այդ գործիչները, որոնք անտարբեր չմնացին հայոց արյունոտ գողգոթայի նկատմամբ և իրենց գրչով գրի են առել իրենց զգացմունքների խռովքը, առաջնորդվում էին խորը բարոյական և համամարդկային սկզբունքներով: Այսպես, Ալեքսանդր Արոնսոնին սարսափեցրել էր հայերի նկատմամբ հաշվեհարդարը, ուստի նա հանդես եկավ զգացմունքային մի պամֆլետով, որը կրում էր «Հայաստան» վերնագիրը: Այնտեղ նա գրում էր. «Մեկ տարուց էլ կարճ ժամանակահատվածում զոհվեցին մեկ միլիոն հայեր, անգեն, ոչ մի մեղք չունեցող, նրանք սպանվեցին միայն նրա համար, որ հերոսաբար մնացին իրենց համոզմունքներին, որ հրաժարվեցին հոգին վաճառել հանուն մարմնի փրկության... Նրա համար, որ նրանք ավելի զարգացած քաղաքակրթության իդեալներն ու իդձերը կրողներն էին, դրա համար հայերը վճարեցին իրենց արյամբ և կյանքով»:

Գրքում Աուրոնը բերում է բազմաթիվ հրեա գործիչների վկայություններ թուրքական իշխանությունների կողմից հայ բնակչության տեղահանությունների, հայերի ոչնչացման մեթոդների մասին և այլն: Դրանք լրացուցիչ աղբյուրներ են ցեղասպանության իրողությունը հաստատելու ու հիմնավորելու

համար: Այդ գրառումները լի են կարեկցանքով ու սարսափով: Դրանց մեջ կան հայոց բախտին արժանանալու սարսափը, մանավանդ որ Ջեմալ փաշան շնականորեն հայտարարել էր, որ շուտով «հրեաները կկիսեն հայերի ճակատագիրը» և ինքը «Պաղեստինը կվերածի երկրորդ Հայաստանի»:

Ի՞նչը ստիպեց իթթիհադականներին հրեաներին չարժանացնելու հայոց ճակատագրին: Աուրոնը այդ հարցի պատասխանը տալիս է, մեջբերելով գերմանացի սոցիալիստ Կոհենի Ռայխստագում արած հայտարարությունը. «Գերմանիան և Թուրքիան լավ յուրացրին, որ հրեաների դեմ բռնաճնշումները չեն մարսելու, ինչպես մարսեցին հայերի գլխին սարքած կոտորածը: Հրեաները կարող են ներագդել գերմանական պատերազմի ֆինանսավորման վրա: Այդ պատճառով էլ նրանք (թուրքերը – Վ. Բ.) դադարեցրին հրեաների տեղահանությունը»:

Հրեական գործիչների կարծիքով հայերի ապագա ճակատագիրը տեսանելի էր դեռևս մինչև առաջին համաշխարհային պատերազմը: Իր աշխատության մեջ Յաիր Աուրոնը ևս պատմական ակնարկի միջոցով ցույց է տալիս, որ հայերի նկատմամբ որդեգրած սուլթանական, իսկ ապա նաև իթթիհադական իշխանությունների հայահալած քաղաքականության հետևանքով հայ ժողովուրդը քայլ առ քայլ, օր առ օր մոտենում էր իր մեծ ողբերգությանը: Վկայակոչելով սիոնիստական շարժման պարագլուխներից մեկի Բեն Յվիի այն տեսակետը, որ իթթիհադականների մոտ Հայկական հարցը հայերին արմատախիլ անելու ճանապարհով հասունացել էր դեռևս Բալկանյան պատերազմից անմիջապես հետո, Աուրոնը իրավացիորեն նշում է, որ Անատոլիան (իմա՝ Արևմտյան Հայաստանը – Վ. Բ.) կորցնելու վտանգի զգացողությունը հանդիսացավ Թուրքիայի կողմից արևմտահայոց ցեղասպանության իրականացման կարևորագույն դրդապատճառներից մեկը:

Ուշագրավ է, որ դեռևս 1914 թ. Բեն Գուրիոնը ևս անդրադարձ է կատարել վերոհիշյալ հարցերին: Նա գրել է. «Բալկանյան պատերազմը ցուցադրեց ռազմական ուժի անարդյունավետությունը, որի վրա հենված էին երիտթուրքերը: Կռաժվարող ժողովրդի հիմքը երերաց և թուլացավ: Ծանրության կենտրոնը Եվրոպայից տեղափոխվեց Ասիա, որտեղ ուժգնորեն ծառացած է արաբական հարցը: Հայերի հարցը ձեռք բերեց առանձնակի սրություն, քանի որ նրանք հաշվարկել էին կարևոր դեր խաղալ կայսրությունում ուժերի նոր հավասարակշռության մեջ, դեր, որն անհամապատասխանելի է նրանց քանակին և նշանակությանը»:

Յաիր Աուրոնի գրքում լայն ծավալով անդրադարձ է կատարվում հայոց ցեղասպանության և հրեական Հոլոքոստի աղերսների վերաբերյալ: Հեղինակը միանշանակ այն տեսակետին է, որ հայոց ցեղասպանությունը Հոլոքոստի նախերգանքն է: Սակայն ինչպես հայտնի է հրեական իրականության մեջ ոչ

բոլորն են կիսում այդ տեսակետը, համարելով, որ Հոլոքոստն իր բնույթով եզակի է: Աուրոնը այդ կապակցությամբ բերում է բազմաթիվ հրեա գիտնականների և գործիչների թեր և դեմ կարծիքներ, ըստ երևույթին վերջնական եզրակացության հանգելու իրավունքը թողնելով իր ընթերցողին:

Խոսելով Հոլոքոստի և հայոց ցեղասպանության միջև եղած ընդհանրությունների մասին, Աուրոնը առաջին հերթին շեշտում է այն հանգամանքը, որ թե՛ հայոց ցեղասպանությունը և թե՛ Հոլոքոստը ուղղված էին սեփական երկրի քաղաքացիների ոչնչացմանը»:

Հոլոքոստի և արևմտահայոց ցեղասպանության միջև աղերսների կապակցությամբ Աուրոնը առաջ է քաշում տեսակետներ ու մոտեցումներ, որոնց հետ չի կարելի համաձայնվել: Այսպես, նա, ըստ էության, չի նույնացնում հայոց ցեղասպանությունն ու հրեական Հոլոքոստը որպես նույնատիպ երևույթներ, գտնելով, որ «Հոլոքոստը մնում է որպես բացարձակապես եզակի պատմական իրադարձություն»: Ճիշտ է, նա չի ժխտում, որ Հոլոքոստի և հայոց ցեղասպանության միջև առկա են տեսանելի զուգահեռներ և ընդհանրացումներ: Մեր կարծիքով, այդ երկու հասկացությունների միջև տարբերությունների այն հիմնավորումները, որ բերում է Աուրոնը, համոզիչ չեն: Աուրոնի և առհասարակ համարյա բոլոր հրեա ուսումնասիրողների միահամուռ կարծիքն այն է, որ Հոլոքոստը ամենից շատ եզակի է նրանով, որ «բոլոր հրեաների վրա դրվում էր հավաքական հանցանքի խարան՝ որպես դավադիրների և վնասարարների, որոնց ֆիզիկական ոչնչացումն անհրաժեշտ է...»: Բայց մի՞թե իրթիհաղականները նույնպիսի խարան չէին դնում ողջ հայ ժողովրդի վրա: Մի՞թե նրանք առաջ չէին քաշել ազգային գերազանցության նոր բանաձև: Մի՞թե հայերի ոչնչացումը իրական քաղաքական առճակատման արդյունք չէր: Աուրոնի կարծիքով նացիստների կողմից եվրոպական հրեաների ոչնչացումը «ծրագրված» և «համակարգված» երևույթ էր, բայց մի՞թե իրթիհաղական պարագլուխների իրականացրածը ծրագրային մարդակերություն չէր, երբ զազանային սառնասրտությամբ ու մեթոդականությամբ համակարգված բնաջնջման էր ենթարկվում մի ամբողջ ժողովուրդ:

Աուրոնը մեղանչում է պատմական ճշմարտության դեմ, երբ գրում է, որ «Օսմանյան կայսրությունում գոյություն չունեին հակահայկական գաղափարախոսություն, որը համահավասար լինեին եվրոպական հակասեմիթիզմին»: Բայց մի՞թե թյուրքիզմն ու պանթուրքիզմը նման գաղափարախոսություն չէին, որոնք հայ ժողովրդին դատապարտում էին ոչնչացման: Աուրոնը նաև չարաչար սխալվում է, երբ գրում է, որ «երիտթուրքերը ազգայնամոլներ էին, բայց ոչ ռասիստներ»: «Բախումը հայերի ու թուրքերի միջև ռասայական աստատ չունեին,– ասում է նա: Դա արյունոտ ազգակրոնական բախում էր՝

ներդրված անկախության պայքարի պատմության մեջ, որի շրջանակներում առավել հզոր հակառակորդը ոչնչացրեց մեծաթիվ խաղաղ բնակիչների»:

Առհասարակ Հոլոքոստը եզակի երևույթ համարող համարյա բոլոր հրեա ուսումնասիրողներին բնորոշ է մի հատկանիշ, նրանք բոլոր ձգտում են նվազեցնել կամ ժխտել ցեղասպանության բոլոր դեպքերի դրամատիզմը՝ բացի հրեական ողբերգությունից:

Սակայն իրողությունն է նաև այն, որ հրեական իրականության մեջ եղել են և այսօր էլ կան մարդիկ, որոնց մտածելակերպը հիշյալ հարցի նկատմամբ տրամազծորեն հակառակն է: Այսպես, նրանցից մեկը՝ Իսրայել Չանգվիլը գրել է. «Ես խոնարհվում եմ նրանց (հայերի – Վ. Բ.) մեծ կորստի առջև: Ես վերցնում եմ փշե պսակը Իսրայելի գլխից և այն դնում եմ հայերի գլխին»: Նա միաժամանակ ձայն է բարձրացրել հայերի դեմ գործած հանցագործությունների համար Թուրքիային պատժելու մասին:

Յաիր Աուրոնն անդրադառնում է նաև հայոց մշակութային ցեղասպանության հարցին: Նա նշում է, որ ցեղասպանության հրեշավոր հանցագործության իրականացման տարիներին ոչնչացվել է ոչ միայն մի ամբողջ ժողովուրդ, այլև հարյուրավոր եկեղեցիներ, վանքեր և հայ մշակույթի այլ արժեքներ: «Թուրքերը, – գրում է նա, – նշանակալից ջանքեր են գործադրել, որպեսզի ջնջեն հայ մշակույթի բոլոր հետքերը, արմատախիլ անեն հայերի ներկայության բուն հիշողությունը այն հողերում, որոնք պատմական Հայաստանի սիրտն էին»: Դեպքերին ժամանակակից հրեա մտավորականները անդրադարձել են նաև թուրքերի կողմից հայկական սեփականության մեթոդիկ թալանի և ազդեցիկ թուրքերի միջև դրա վերաբաշխման հարցին՝ առանց հայերին որևէ փոխհատուցում տալու: Այդ մտավորականները դա որակել են որպես «ներքին գաղութացում»:

Աուրոնը կանգ է առնում նաև հայերի հայրենագրկության հարցի, ինչպես նաև ցեղասպանությունը պետական մակարդակով իրագործելու խնդրի վրա: «Հայկական ողբերգության չափերը գիտակցելու համար, – գրում է նա, – կարելի է նաև չհաշվարկել գոհերի ճշգրիտ թիվը, որը շատ հավանական է, որ այդպես էլ երբեք հայտնի չի դառնա: Շատ ավելի կարևոր է, որ խոսքը մի ժողովրդի ավելի քան կեսի համակարգված ոչնչացման անժխտելի փաստի մասին է, ժողովուրդ, որն արդյունքում բռնի կերպով վտարվեց այն տարածքից, որտեղ ապրել էր ավելի քան երեք հազարամյակ: Ոչ պակաս կարևոր է և այն, որ այդ բոլոր գազանությունները կատարվեցին Թուրքիայի պաշտոնական իշխանությունների կողմից»:

Յաիր Աուրոնը նշում է, որ հայերի ոչնչացումից հետո Թուրքիայում իշխանության եկած բոլոր կառավարությունները ժխտել են և շարունակում են ժխտել, թե հայերի զանգվածային ոչնչացումը գիտակցված քաղաքականությամբ

յան արդյունք էր: «Գոյություն ունեն համոզիչ ապացույցներ՝ հիմնված ժամանակի ամենաբազմազան աղբյուրների վրա, – գրում է նա, – որ Թուրքիայի տարբեր մասերում (անկասկած ոչ միայն ռազմական գործողությունների շրջաններում) խաղաղ բնակչության զանգվածային ոչնչացումը կատարվում էր Կոստանդնուպոլսից թուրքական իշխանությունների ուղիղ հրամանով»: Հայերի ցեղասպանության փաստը կատարելապես անվիճելի է, սա է Աուրոնի եզրակացությունը: Ընդ որում նա հատուկ շեշտում է, որ ցեղասպանությունն իրագործվել է երեք վարչակարգերի օրոք՝ սուլթանության, երիտթուրքերի և քեմալականների: Խոսելով հայոց ցեղասպանության նկատմամբ մերօրյա Թուրքիայի ղեկավարության որդեգրած քաղաքականության մասին, Աուրոնը գրում է, որ այդ մարդիկ «ջանքեր են գործադրում՝ ջնջելու համար ամեն հիշատակություն հայերի մասին, ասես թե նրանք երբեք չեն եղել Օսմանյան կայսրության պատմության մասը: Թուրքիայում հանցանքի ժխտման վրա ծախսվել և ծախսվում են ահռելի միջոցներ»: «Զի կարելի մոռանալ, – շարունակում է նա, – որ բուն «ցեղասպանություն» տերմինը հայերի ոչնչացման ժամանակ գոյություն չուներ, սակայն հայերի նկատմամբ երիտթուրքերի գործողությունները հենց ցեղասպանություն էին»: Գրքում նա բազմիցս շեշտում է, որ հայերի ցեղասպանության փաստը կատարելապես անվիճելի է: «Այդ իմաստով, – գրում է նա, – հայկական ցեղասպանության ժխտումը հավասարազոր է Հոլոքոստի ժխտմանը»:

Յաիր Աուրոնն իր անհամաձայնությունն է հայտնում Պրինստոնի համալսարանի (ԱՄՆ) պրոֆեսոր, հրեա Բեռնարդ Լյուիսի հետ, որը ձայնակցելով թուրքական պաշտոնական պատմագրությանը, ֆրանսիական «Le Monde» թերթին տված հարցազրույցում հրաժարվում էր հայերի նկատմամբ կատարված հաշվեհարդարն անվանել ցեղասպանություն: Լյուիսի կարծիքով թուրքերը հայերին սպանել են «նրբացուցիչ հանգամանքներում», դրա տակ նկատի ունենալով այն հանգամանքը, որ նրանք պահանջում էին անկախություն և չէին թաքցնում իրենց համակրանքը Ռուսաստանի նկատմամբ: Որ իբր հայերը դավաճանել են օսմանյան պետությանը և այլն: Աուրոնը նշում է, որ հայերի դավաճանության վերաբերյալ այդ բացարձակապես ստահոտ և անհիմն տեսակետը վճռականորեն ժխտվել է ոչ միայն հայ հետազոտողների, այլև եվրոպացի, հատկապես ֆրանսիացի և նույնիսկ ֆրանսաբնակ հրեա մտավորականության կողմից:

«Թուրքիան մի երկիր է, – արձանագրում է նա, – որ ահավոր հանցագործություն է գործել մարդկայնության դեմ և շարունակում է դա ժխտել»: Նա այն հաստատ համոզմանն է, որ միջազգային հանրության և առաջին հերթին հենց Թուրքիայի կողմից հայոց ցեղասպանության փաստի ընդունումը առաջնահերթ կարևորություն ունեցող պատմական, բարոյական և դաստիա-

րակչական անհրաժեշտություն է: «Այդ ողբերգության գիտակցումը և հուշը նրա մասին կարևորագույն, թեև ոչ միակ պայմանն է, որպեսզի նման չարիքը երբեք չկրկնվի», – համոզված է գիտնականը: Գրքում նա բազմիցս շեշտում է, որ ցեղասպանության դատապարտումը, որ երկրում կամ որ ժողովրդի հետ էլ այն տեղի ունեցած լինի, պետք է լինի բացարձակ, տեղ չթողնելով ոչ մի ժխտողականության համար:

Յաիր Աուրոնի գրքում հատուկ գույն է նվիրված խիստ կարևոր մի հարցի, այն է՝ ինչպիսի վերաբերմունք է դրսևորվել հայոց ցեղասպանության հանդեպ Իսրայել պետության ստեղծումից հետո: Անշուշտ, եղել են և ներկայումս էլ կան իսրայելցի գիտնականներ, ցեղասպանագետներ և այլն, որոնք անվերապահորեն ընդունում են հայոց ցեղասպանության իրողությունը: Աուրոնը վկայակոչում է նրանցից մի քանիսին, այդ թվում նաև Ռիչարդ Լիխտեյմանին, որը գրել է. «Աշխարհի ժամանակակից պատմության մեջ դա ռասայական հատկանիշով շարունակական հալածանքի առաջին դեպքն էր, որի նմանությամբ և գործեց Հիտլերը 1940 – 1945 թվականներին հրեաների ոչնչացման իր արշավի սկզբնական փուլում»:

Աուրոնը սակայն ցավով արձանագրում է, որ Իսրայելը որպես պետություն հետևողականորեն հրաժարվում է ճանաչել հայոց ցեղասպանությունը, թեև իսրայելական մամուլի առանձին օրգաններ և իսրայելցի մտավորականներ քննադատում են այդ մոտեցումը, դա որակելով որպես «պաշտոնական բյուրոկրատիայի կողմից դրսևորված երկերեսանիության, անսկզբունքայնության և բարոյական վախկոտության դրսևորում»: Որ այդ շրջանակները «անդադար աշխարհին հիշեցնում են հրեական Հոլոքոստի մասին, իսկ այդ ժողովուրդների նկատմամբ իրագործված Հոլոքոստը համարում են ընդամենը շահարկման առարկա»: Մինչդեռ, ինչպես նշում է Աուրոնը, Իսրայելում կան մարդիկ, որոնք գտնում են, որ իրենց սեփական Հոլոքոստի հիշողությունը ստիպում է իրենց կարեկցանքով վերաբերվել հայ ժողովրդի տառապանքին: Աուրոնը դրանց դասում է «բացառիկ մարդկանց» շարքին, որոնք «չեն պահպանում գոյություն ունեցող կանոնները»: Դրանք Աուրոնի արտահայտությամբ անկախ մտածողություն ունեցող «խռովարարներ» են, որոնք քննադատաբար են վերաբերվում «սիոնիստիական հասարակական դրվածքին»: Նա ցավով խոստովանում է, որ ժամանակակից իսրայելական հասարակության մեջ դեռ շատ են այն մարդիկ, որոնք գերադասում են չիմանալ հայերի ցեղասպանության մասին: Սակայն լավատեսորեն հույս է հայտնում, որ ի վերջո այդ տաբուն կհաղթահարվի և լռության պատը կտա խորը ճեղքվածք:

VAHAN BAIBOURTIAN
Doctor of History
Institute of Oriental Studies NAS RA
mr.bayburdyan@mail.ru

A REMARKABLE STUDY ON THE ARMENIAN GENOCIDE

SUMMARY

The article presents a critical analysis of the Israeli historian Yair Auron's book "The Banality of Indifference: Zionism and the Armenian Genocide" published by New Brunswick, London, in 2000. The Armenian translation of Auron's book saw its publication in 2013 in Yerevan.

The prime value of this book lies in the fact that the author has meticulously collected, brought together and presented materials which were issued in the Jewish press in various countries of the world on Armenians, the Armenian Cause, and, on the whole, the fate of Armenians living in the Ottoman Empire. In reality, the main objective of his research was to investigate and highlight the attitude of the Jewish community of Palestine towards the genocide of Armenians. On the other hand, Auron's book deals with the study of the Armenian-Jewish relations in the Ottoman Empire as well. The author thoroughly discusses the essence of the phenomenon of the genocide as a crime against humanity.

The evasive attitude towards the fact of the genocide of Armenians assumed by a chain of changing Israeli governments, which is almost marginal to its denial, is assessed by Auron as morally unacceptable. He calls the Armenian Genocide an "unpunished crime", and believes that the actuality that the Turks, who had committed the massacre, got away without facing any charges in the International Criminal Court, made Hitler believe that he, too, would escape unpunished for his crimes against humanity.

Auron assumes that Turkey was desperate to find a scapegoat for their defeat in World War I, and the easiest prey in that capacity was the defenseless, unprotected Armenian people.

Yair Auron acknowledges that, in reference to Armenians, the leading figures of the Zionist movement had adopted a reprehensible 'mercenary' policy. Meanwhile, there were certain representatives of the Jewish intelligentsia who condemned the atrocities committed by the Turkish government towards Armenians, expressing their sympathy for the Armenian people.

The book discusses extensively the analogies, similarities and differences between the Armenian Genocide and the Jewish Holocaust.

ВААН БАЙБУРТЯН

*Доктор исторических наук
Институт востоковедения НАН РА
mr.bayburdyan@mail.ru*

ПРИМЕЧАТЕЛЬНОЕ ИССЛЕДОВАНИЕ О ГЕНОЦИДЕ АРМЯН

РЕЗЮМЕ

В статье представлен критический анализ книги Израильского историка Яира Аарона «Банальное безразличие: Сионизм и Армянский Геноцид», издательство New Brunswick, London, 2000. В 2013 г. в Ереване был издан армянский перевод книги Аарона.

Основная ценность этой книги заключается в том, что автор тщательно собрал и представил материалы печатавшиеся в еврейской прессе разных стран мира касающиеся армянам, армянского вопроса, а также вообще судьбы армян, живших в Османской Империи. На самом деле, основная цель данного исследования состояла в том, чтобы изучить и описать отношение еврейского сообщества Палестины к Геноциду Армян. С другой стороны, книга Аарона посвящена также изучению армяно-еврейских отношений в Османской Империи. Автор подробно обсуждает суть явления геноцида как преступления против человечности.

Уклончивое отношение к факту Геноцида Армян, принятое цепочкой сменяющихся израильских правительств, что почти равносильно его отрицанию, по мнению Аарона, нравственно недопустимо. Он называет Армянский Геноцид «безнаказанным преступлением» и считает, Гитлер смог поверить, что его преступления против человечества также останутся безнаказанными именно после того, как туркам, совершавшим массовые убийства резню и депортацию не было предъявлено никаких обвинений со стороны Международного Уголовного Суда.

Аарон утверждает, что Турция отчаянно пыталась отыскать виновных за своё поражение в Первой Мировой Войне, и самой лёгкой добычей в этом плане оказался незащищённый армянский народ.

Яир Аарон считает, что ведущие лица Сионистского движения приняли по отношению к армянам политику, достойную порицания. При этом в среде еврейской интеллигенции находились люди, осуждавшие зверства, совершённые турецким правительством по отношению к армянам и выражавшие сочувствие армянскому народу.

В книге освещаются вопросы, связанные исключительно с аналогиями и различиями между Армянским Геноцидом и Еврейским Холокостом.